ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բանձանոցքոյ սարքագործութիւնը ընդունելոյ է ֆիւրիքլիէի մէջ Հրապարակողի տօր, իսկ ուրիշ քաղաքներու մէջ պարտութիւն Հրատարակչոյ տօր։



Լրագիրը շաբաթը մինգամ կը հրատարակուի ամէն շաբաթ օր, և գործեցան գինն է վեց մանէթ ԼԷ ֆիւրիքլիէոնմը և ութսունվեց ռուբլի տարեշրջանը էաց կէս պարտութիւնը էրէտ մանէթ։

ՁՈՐՐՈՐԴ

Ով որ ուզենայ վաճառականութեան կամ ուրիշ գործի վերաբերեալ յայտարարութիւն տալը լրագրիս մէջ, տալին 4 տաղի համար կը վճարուի 1 կոպէկի տրծաթ։

ՏԱՐԻ

ՀԱՄԱՐ 14 ԱՊՐԻԼԻ 1 1861 ԱՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՔ։

Բարձրագոյն Հրամանաւ 20 դեկտեմբերի 1861 ամի, Լեռնականաց դէմ պատերազմի մէջ զերազանցուելոյ համար բարձրանում են տոհմիճաններով

Սեվերակի Դրագունսկի Նորին Կայսերական Բարձրութեան Կայսերազն ժառանգի գնդի Պորուչիկք Տէր Աստուածատրեանց և Արգիսեանց յաստիճան Շտաբս—կապիտանի։ Աստրեանսկի գնդի Պրապորշիկ Դրդեանց յաստիճան Պոդպորուչիկի, Դաղեստանսկի գնդի պրապորշիկ Երզրումեանց—երկանաբերի յաստիճան Պոդպորուչիկի։ Շերվանսկի Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի գնդի պոդպորուչիկք Դրդեանց, Տէր Աստուածատրեանց, և Աբրագամեանց յաստիճան շտաբս կապիտանի։

Լրագրիս «12» թուահամարումը յայտնեցինք Արշաւումը կատարուած անցքը։ այժմ հաղորդում ենք էն անցքի լրացուցիչ տեղեկութիւնքը։ Երբ որ մնանում էր դեկտեմբերի 13, որ է տարելից Դրսխովի մոտ կատարուած պատերազմին, և որի համար արտասահման լրագրները նախազուշակում էին, թէ են օրը Արշաւումը պէտք է հրապարակական խռովութիւն լինի, տարածուեցաւ համբաւ, թէ մայրաքաղաքի բնակիչքը և բոլոր հանգարները իրանց դրօշակներով հաւաքուելու են Դրսխովեան դաշտումը ժամերգութեան կարգին ներկայ լինելոյ համար, և թէ իշխանութիւնը իր կողմից մտադիր է ուղարկել էն տեղ երկու գունդ (քատալիոն) զօրք, էն Ռուսաց յիշատակի համար, որք մասնուեցան պատերազմի դաշտումը։ Երկու օր առաջ յայտարարութիւնք կպցուեցան, որովք հրաւիրում էին ամենքին հաւատարիմ երեկայեան ժամը վեցին կերոնների հանդիսի հետ քաղաքի միջոցը անց կենալու համար։ Պոլիցիայն տեղեկութիւն ստանալով բանտարկեց յայտարարութիւն շինողներից մէկին, և նա մատնեց իրա ընկերներին։ Պարեսր հրամաններ ցրուեցան և համբարներին զգուշացրին, և կարծում էին, թէ վրդովմունք չի լինիլ։ Սակայն դեկտեմբերի 13 ճաշից յետոյ մեծ բազմութիւն մարդկանց դնացին դէպ 'ի Պաուլենեաց եկեղեցին հին քաղաքի մոտ, և երեկոյեան 5 ժամին մոտ խուռն բազմութիւնը լրացուեցաւ արուարձանումը և մերձակայ տեղերքումը։ Պոլիցիայն գործ ածեց ամենատեսակ յորդորմունք և համոզմունք, որ կարողանայ ամբոխները ցրուել, բայց 'ի զուր։ Եդ միջոցումը 7 ժամին մոտ Գոլերիա փողոցից՝ որ տանում է դէպ 'ի արուարձանը, երևեցաւ հոգևորական հանդէսը բեմոլիցիական (խռովութեան) դրօշակով, կերոններով և մանր դրօշակներով։ Մտիկ չը տալով Պոլիցիայի համոզմանցը՝ որով աշխատում էր նա ցրուել ամբոխը, խուռն բազմութիւն շարունակում էր առաջ գնալը։ Բայց որովհետև մեծ տարաբախտութիւնք կարող էին պատահել նեղ փողոցումը, վասն որոյ թոյլ տուին որ ամբոխը դուրս գայ արուարձանը և հրաման տրուեցաւ, որ նրանց եռևից գնան ժանդարմերը (որք նախազգուշութեան համար հաւաքած էին)։ Կառավարութիւնը կամենալով դործ ածել հաշտութեան բոլոր հնարքները, նոր մէկանց խնդրեց ամբոխից, որ ցրուին։ Խռովութեան գլխաւորները դրօշակներ և կերոններ բռնած սկսեցին յարձակուիլ ժանդարմերի վրա, և եդ հնարքով իրանց համար ճանապարհ բաց անել։ Բայց ժանդարմերքը դէմ դրին նրանց շուռ տուած թերերով (բուրթերնով) և մէկ քանի վայրկեանումը ամբոխը ցրուեցաւ։ Ինչպէս էս ժողովի միջոցումը շատ մեծ բազմութիւն կար, սակայն միտաս սակաւ մատահեցաւ, ոչ որ չը մեռաւ և մեծ չարդուածք շատ սակաւները կրեցին։ Խռով-

վութեան գլխաւորներից մէկ քանիսը բռնուեցան և նրանց մօտ գտնուեցան Միրոսլավկիս Կոս-Էոֆ (պրոկլամացիա) և 1794 թուի խռովութեան գլխաւորի, կոշկակար Գիլենսկիս պատկերները։ Այս նշանները բաւական յատկացրին խռովութեան ծագումը և բնաւորութիւնը։

Ընենալով աչքի առաջը են արտասուելի հետևանքը, որ կարող էր յառաջ բերել էս հրաւէրը, Կոպիսի արդ. վերջացնելը ամենքին ուրախացրուց. բայց էս չէր խռովութեան գլխաւորների նպատակը։ Ասն որոյ նրանք միւս օրը աշխատում էին նորոգել խռովութիւնը և տարածում էին ամենատուտ համբաւներ, 'ի միջի այլոց և էն, իբրու թէ շատ մարդիք են սպանուած և վիրաւորած, և փողոցներումը ման էին գալիս սպաւորների շրերով։ Սրա հետևանքը եղև էն, որ փետրվարի 15-ին հաւաքուեցան բազմաթիւ ամբոխներ. ժամը մէկին նրանք միացան Իզիլմունդեան արուարձանումը և դիմեցին դէպ 'ի Աբրակսմիդեան արուարձանը՝ Փոխաբքայի պալատի մօտ գնալու դիտաւորութեամբ, ուր էն ժամանակը ատենակալութիւն ունէր երկրագործութեան ընկերութիւնը։

Պոլիսիայն և ժանդարմէքը հրաման ստացան ցրուել ամբոխը առանց գործ ածելու զէնք։ Այդ միջոցում նոյն փողոցումը տանում էին մէկ ինչեցեալ, որի յանցակաւորողները խառնուեցան խռովութեան ամբոխների հետ և նեղուածքը աւելի ուժգնացաւ։ Բայց էս հանգամանքը կռիւ չէր պատճառել, թէ որ չէր-դարձ եկել յանկարծ հետևակ զօրաց մէկ գունդ (բատ) առաջնակայ փողոցից և չէր հանդիպել արուարձանի շատ նեղ անցումը, որ տեղ նրան Ճիլեց ամբոխը և կիստուած կառքերը։ Այդ միջոցում ոկսեցին զօրաց վրա քարեր գցել։

Ոչարազոյն իշխանութիւնը էնքան հոգատարութիւն ունէր հեռու կենալ ամենատեսակ շփոթութիւնից, մինչև որ մէկ զօրականի հրացանն էլ լցցրած չէր, բայց էսպիսի յարձակմունքից նեղուցած զօրքը հարկադրուեցան ներգործել. զօրականները հրաման ստացան ամբոխի առաջի առաջը լցնել հրացանները և առաջին շարքը (վաշվոզը) դատարկեց։ Ամէս մարդիք սպանուեցան, վերջը վերաւորուեցան. և կատարեալ անկարգութեանց փորձը վերջացաւ։ Սակայն մնաց յուզմունքը չը դադարեցան։

Փետրվարի 16 Այրշաբաթ օրը եպիսկոպոս Գիւալկովսկին ուղեկցութեամբ երեք անձանց, մնացյց զինեալ ազիւտանտ կենալ Գորչակովին ինդիրը 'ի Բարձրագոյն անուն։ Էս ինդիրը գրում ենք էս տեղ լրիւ։

«Թագաւոր, ապեսալի անց.քերը՝ օրք նորում պատահեցան Այրշաբաթը, բարկութիւնը՝ որ նախընթաց էր նրանց և որ հետևեցաւ նրանցից յետոյ, խորին արքամութիւնը, որ թափանցեց ամենքի սիրտը, ստիպեցին մեզ արկանել էս ինդիրը առ ոտս ՁԵՐԴ ԿԱՅՍԵՐՈՒԱԾՈՒՆ ՄԵԾՈՒԹԵՍՆ բոլոր աշխարհի (Լեհաստանի) անունից, յուսալով, որ ՁԵՐ ազնիւ սիրտը, Աստուած, չի հերքել տառապեալ ազգի ձայնը։ Այս անց.քերը, որի դառն տեսարանները մեք չենք նկարագրում, բոլորովին չեն ծնունդ աւելիչ կրից մատնաւոր դատաց բնակչաց, այլ ընդհակառակը նրանք միահոգի և գեղեցկախօս արտայայտութիւնք են անաւտարած զգացմանց և չը Ճանաչած կարեաց։ Այն տանջանքը՝ որ կէս դարից աւելի է կրում էնպիսի ազգը, որ դարաւոր ժամանակաւ ունէր ազատ կառավարութիւն, ազգը՝ որից խլած են միչև անգամ Ճանապարհները իրանց գանդատանքը և հառաչակաց կարեաց արտայայտութիւն թագաւորին հասցնելու, հասցրել է նրան էն վիճակին, որ նա ուրիշ տեսակ չի կարողանում արտայայտել իրա ձայնը, եթէ ոչ զէնքերի հեծութեամբ։ Ասն որոյ և չի դադարում մատուցանել էդ զէնքը։ Այս երկրի ամէն մէկ բնակչի սրտի խորութեան մէջ պահած է զբեղ զգացմունք առանձին ազգայնութեան, որ գերազանց է Եւրոպիոյ ուրիշ ազգերի ազգայնութիւնից։ Այդ զգացմունքը չի խորտակուիլ ոչ ժամանակից, ոչ յեղափոխութիւններից. տարաբաղդութիւնը ոչ միայն չի թուլացրել, այլև կարծրացրել է նրան։ Ամէն բանը՝ ինչ որ վիրաւորում է կամ ճնշում է նրան, ալեկոծում է մաքերը։ Բայց այսմ էս օրհասական ազդեցութիւնը կարել է բոլոր մտերմութիւնը կառավարչաց և կառավարելոց մէջ։ Մտերմութիւնը չի կարող վերածնանիլ, քանի որ գործ կը դրուին բռնական, ոտիպոզական միջոց.ք, որք ոչինչ պտուղ չունին։ Երկիրը՝ որ մէկ օր լուսաւորութեան ատպարիզը հաւատար էր կանգնած իրա հարևանների հետ Եւրոպայում, կարողութիւն չունի բացուելոց ոչ բարոյականաբար, ոչ նիւթականաբար. քանի որ նրա եկեղեցին, օրէնսատուութիւնը, հրապարակական կրթութիւնը և նրա բոլոր հասարակաց բարկացուութիւնը (օրգանիզացիա) զրկուած կրնեն իրանց պատմաբանական աւանդութիւններից։ Մեր ժողովրդեան ցանկութիւնը այնու առաւել զօրեղ են, որ եւրոպական ահագին դերդաստանի մէջ՝ համարեա թէ մենակ նա է զրկած դոյութեան անշուշտ հարկաւոր պայմաններից, առանց որոց ոչ մէկ ընկերութիւն չի կարող գիմել բացման շաւղովը, որ ցոյց է տալի Նախախնամութիւնը։ Արիանելով առ ոտս Գահին մեր ազգից և մեր բոցավառ ցանկութեան արտայայտութիւնը, և հաւատալով 'ի բարձր Ճշմարտութիւն և արդարադատութիւն ՁԵՐԴ ԿԱՅՍԵՐՈՒԱԾՈՒՆ ՄԵԾՈՒԹԵՍՆ, համարձակիմք Աստուծոյ ձայնել առ ՁԵՐԴ Մեծահոգութիւն։ Պարշաւ, 23 փետրվարի 1861 ամի։

Փոխաբքայն Լեհաստանու թագաւորութեան խնդրից էս մասին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրաման, և ԼՍՈՒԻՆ ԿԱՅՍԵՐՈՒԱԾՈՒՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ, արժանացրուց նրան հետևեալ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ընկերպի 25 փետրվարի։

«Կնեազ Միխայիլ Դմիտրիվիչ։ Էս կարդացի խնդիրը, որ գալիս ուղարկել կիր Լենձ։ Էս կարող էր մնալ բոլորովին առանց մատդրութեան, իրրև գաղտնութիւն մէկ քանի անձանց, որք փոխացում. յարուցած անկարգութեանց պատճառաւ իրաւունք են առնում իրանց վրա ինքնակամ դատապարտել բոլոր ընթացքը թագաւորական կառավարութեան Լեհաստանու թագաւորութեան մէջ։ Բայց ես պատրաստ եմ էս բոլորի միջոցը տեսնել միայն մնորութիւն։ Իմ բոլոր հոգացողութիւնքը նուիրած են գործոյն վրա իմ վերանորոգութեանց, որք պահանջում են Իմ Կայսերութեան մէջ ժամանակի ընթացքը և հասարակաց օգտի յառաջդիմութեանց և չը Ճանաչած կարեաց։ Այն տանջանքը՝ որ էս դարից աւելի է կրում էնպիսի ազգը, որ դարաւոր ժամանակաւ ունէր ազատ կառավարութիւն, ազգը՝ որից խլած են միչև անգամ Ճանապարհները իրանց գանդատանքը և հառաչակաց կարեաց արտայայտութիւն թագաւորին հասցնելու, հասցրել է նրան էն վիճակին, որ նա ուրիշ տեսակ չի կարողանում արտայայտել իրա ձայնը, եթէ ոչ զէնքերի հեծութեամբ։ Ասն որոյ և չի դադարում մատուցանել էդ զէնքը։ Այս երկրի ամէն մէկ բնակչի սրտի խորութեան մէջ պահած է զբեղ զգացմունք առանձին ազգայնութեան, որ գերազանց է Եւրոպիոյ ուրիշ ազգերի ազգայնութիւնից։ Այդ զգացմունքը չի խորտակուիլ ոչ ժամանակից, ոչ յեղափոխութիւններից. տարաբաղդութիւնը ոչ միայն չի թուլացրել, այլև կարծրացրել է նրան։ Ամէն բանը՝ ինչ որ վիրաւորում է կամ ճնշում է նրան, ալեկոծում է մաքերը։ Բայց այսմ էս օրհասական ազդեցութիւնը կարել է բոլոր մտերմութիւնը կառավարչաց և կառավարելոց մէջ։ Մտերմութիւնը չի կարող վերածնանիլ, քանի որ գործ կը դրուին բռնական, ոտիպոզական միջոց.ք, որք ոչինչ պտուղ չունին։ Երկիրը՝ որ մէկ օր լուսաւորութեան ատպարիզը հաւատար էր կանգնած իրա հարևանների հետ Եւրոպայում, կարողութիւն չունի բացուելոց ոչ բարոյականաբար, ոչ նիւթականաբար. քանի որ նրա եկեղեցին, օրէնսատուութիւնը, հրապարակական կրթութիւնը և նրա բոլոր հասարակաց բարկացուութիւնը (օրգանիզացիա) զրկուած կրնեն իրանց պատմաբանական աւանդութիւններից։ Մեր ժողովրդեան ցանկութիւնքը այնու առաւել զօրեղ են, որ եւրոպական ահագին դերդաստանի մէջ՝ համարեա թէ մենակ նա է զրկած դոյութեան անշուշտ հարկաւոր պայմաններից, առանց որոց ոչ մէկ ընկերութիւն չի կարող գիմել բացման շաւղովը, որ ցոյց է տալի Նախախնամութիւնը։ Արիանելով առ ոտս Գահին մեր ազգից և մեր բոցավառ ցանկութեան արտայայտութիւնը, և հաւատալով 'ի բարձր Ճշմարտութիւն և արդարադատութիւն ՁԵՐԴ ԿԱՅՍԵՐՈՒԱԾՈՒՆ ՄԵԾՈՒԹԵՍՆ, համարձակիմք Աստուծոյ ձայնել առ ՁԵՐԴ Մեծահոգութիւն։ Պարշաւ, 23 փետրվարի 1861 ամի։

թիւնը։ Այն իսկ հոգացողութիւնը անտահման տարածուած են իմ հպատակների վրա եկ Եկեղեցական Թագաւորութեան մէջ։ Ամէն բանի համար ինչ որ կարող է հաստատել նրանց բարեկեցութիւնը։ Ես երբէք չեմ եղել և չեմ լինիլ հով սրտով։ Ես արդէն գրգռվել եմ ցոյց եմ տուել նրանց իմ սրտեռանդ ցանկութիւնը նրանց վրա եկ տարածելոյ բարերար ներգործութիւնը Հնմարտիւ օգտաւէտ, էական և ատաՀման առ ատաՀման բարելաւացմանց։ Ընդհանրապես կը մնան իմ միջոցը եդպիսի ցանկութիւնը և դիտաւորութիւնը, վասն որոյ և Ես իրաւունք ունիմ սպասելոյ, թէ իմ հոգացողութիւնը չեն դժուարանալ և թուլանալ էնպիսի պահանջողութիւններով, որք իրա ժամանակին չեն, կամ մեծացրած են և իմ հպատակաց իսկական օգուտներին անյարմար։ Ես կը կատարեմ իմ բոլոր պարտաւորութիւնը։ Բայց չեմ ներել հասարակաց կարգի խանգարումը։ Եդպիսի հիման վրա իրքին կառուցանելը անկարելի է։ Ամենայն սկիզբն եդպիսի ձգտմունքներից ծնած ինքն իրա համար արտասանում է դատապարտութիւն։ Ես չեմ թոյլ տայ մինչև եդ տեղ։ Թոյլ չեմ տալ ոչինչ ինքնակար ուղղութիւն, որ կարողանայ դժուարացնել կամ ուշացնել ատաՀման առ ատաՀման կանոնաւոր բացումն կամ յառաջադիմութիւնը։ Ես կողմի բարեկեցութեան, որ միշտ և շարունակ կրնի նպատակ իմոց ցանկութեանց և հոգացողութեանց։»

Իսկականի վրա ԵՍ ԻՆՔՍՅԱՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ձեռնամը դրած է «Ձեր բարեացակամ ԱՂԷՔՍԱՆԴՐ։

Ս. Պետերբուրգ։ 25 փետրվարի 1861 ամի։

Վերջացնելով ես անցքերի նկարագրութիւնը, մեք ուրախութեամբ յարակցում ենք, թէ փետրվարի 15-ից մինչև էսօր Պարշավամը հասարակաց հանդարտութիւնը մնում է անվնաս։ (Կովկաս)։

ՓԱՐԷԶԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ։

Օրէնդրութեան ժողովումը (կորպուսումը Պ. Պ. Յուլ Ֆավրը, Պարժանտոն, Պիկար, Գինոն և նախարարները առաջարկեցին հետևեալ ադրէսը՝ «Հասել է ժամանակը—գործ դնելու Հռովմայ համար իմաստուն սկզբունքը անխառնութեան (օտարի գործադրումը չը խառնուելոյ) և հանելով էն տեղից ֆրանսիական զօրքերը, թողնել Իտալիայն իրա վիճակի իշխող։»

Իսկ կաթոլիկական պատգամաւորք առաջարկեցին՝ «Մեք հաւատի ենք Կայսրը իբրև գլուխ առաջին կաթոլիկական ազգի կը պաշտպանի Պապի սրբազան ինքնակալութիւնը, որ բաղկացնում է նրա հոգևորական անկախութեան անհրաժեշտ պայմանը և գրաւական է խաղաղութեան Եւրոպայի համար։

Ֆրանսիումը կաթոլիկութեան կուսակիցները բոլորովին վշտացել են։ Փետրվարի 25 ին հրաժարական ողջոյն տուին Պապին 50 վերընտրելի (կամաւոր սպառազինեալք) ըստ մեծի մասին ֆրանսուզք, որք գնում են Ընակվի, ուր այժմ դարբվում են մէկ քանի զօրախումբք (բատալիոնք)։ Պիոս թ. նրանցից մէկ քանիսի հետ խօսելուց յետոյ ասաց նրանց՝ «որդեակք իմ՝ ես միշտ սրտով եմ տեսնել ձեզ էս տեղ, և որովհետև դուք արդէն եկել է.ք, ես հոգւով ողջունում եմ ձեզ։ Սակայն ձեր դեղեցիկ անձնազոհութիւնը անօգուտ է, ըստ որում այժմ ամենայն ինչ կատարեալ է։ Ես էստուանք ասել եմ մէկ քանի ֆրանսուզ եպիսկոպոսների, 'ի Թիւս որոց և Թենայինին։ Եթէ նամակ կը գրէք ձեր ընտանեացը, գոհութիւն յայտնեցէք նրանց իմ անունից։ Օրհնում եմ ձեզ։»

Կոմս Կավուրը բողոք է ուղարկել Հռոմի, թէ ընչի՞ համար ֆրանցիսկ Բ. մնում է էն տեղ։

Հռովմումը շարունակում են ձայնարկութիւնը 'ի պատիւ Վիկտոր—Էմմանուէլի։ Այս ձայնարկութեանց մէջ մասնակից ընելու համար արտաքսուեցան համալսարանից 20 ուսանողք։

Գայետից դուրս եկան մնացած վերջին նեապոլիտական զօրքը 9000 հոգու չափ, որք մինչև Միսսինի և Ցիվիտելլի առումը կը մնան Իսկիա, Ինջիգա, Կապր և Պրոչիդա կղզեաքումը։ Որովհետև սրանք ամէնքը չեն կամենում ծառայել Սարդինեան բանակումը, վասն որոյ նրանց կ'արձակեն յետոյ իրանց հայրենիքը։

Ֆրանցիսկ Բ. հրամայել է ղեներալ Ֆերդուլացին շարունակել Պիսսինի պաշտպանութիւնը և ուղարկել է նրան 30,000 սոկի։

Իտալական լրագիրները ասում են, թէ Վիկտոր—Էմմանուէլն և նրա ժառանգացը թագաւորի տիտղոս տալու օրէնքը կը ստորագրուի և կը հրատարակուի մարտի 2 ին թագաւորի ծննդեան օրը։

Պրուսիոյ լրագիրը ասում է, թէ Պապի աշխարհական իշխանութիւնը հաշտում է արդէն իրա ընելութիւնը, ոչ թէ ամիտներով, այլ օրերով։ Երբ որ Վիկտոր—Էմմանուէլը կը ձայնուի Իտալիոյ թագաւոր, Պապի ձեռքին կը մնայ միայն Տիբը գետի աջ կողմը և Հռովմը կը դառնայ նոր թագաւորութեան մայրաքաղաք։

Հռովմից գրում են, թէ էն տեղ ծագել են մեծ տարաձայնութիւնք կարդինալների մէջ, որոց մէկ մասը պահանջում է հաշտութիւն գցել Պապի և Պիեմոնտի մէջ, իսկ միւս մասը յոյս ունի, թէ Պիոս թ. կ'երթայ Իսպանիա։

Մինինգ—Պոստ լրագիրը յայտնում է Փարէզի կոնֆերենցիայն (խորհրդարանը) դատողութիւն անելով ֆրանսական զօրաց Սուրեստանումը մնալու վրա, պէտք է պարապի ընդհանուր խնդրոյ վրա յաղագս կառավարութեան Տաճկաց բոլոր Օսմանեան կայսերութեան։

Լիբանանու սարից եկել են Փարէզ Սարանիա պատգամաւորք և խնդրում են գոնէ մէկ տարի շարունակել ֆրանսուզ զօրաց Սուրեստանումը մնալը։ Աբդ—էլ—Կադերը նայնպէս դրել է Կայսր Նապոլէոնին նամակ, որի մէջ ես երկրի դրութիւնը նկարագրում է շատ խաւար գոյներով։

Սուրեստանու գործոց համար սարքած կոնֆերենցիայն միանգամ էլ չի հաւաքուել, (կարծում են մէկ քանի լրագիրք), տերութեանց մէջ ծագած տարաձայնութիւնների պատճառաւ։ Ըստ որում Լորդ Կոուլի առաջարկութիւնը՝ ֆրանսոզաց մնալը շարունակել մինչև մայիսի մէկը չ'ուժէ օրագրութեան մէջ գրելու։ Կայսրը համարում է էս ժամանակակէտը չափազանց կարճ, և

ենգուը համար վճռողաբար չի կամենում ընդունել։

Պարի լրագիրը հաղորդում է Կոնստանդնուպոլից, թե Ցարական կառավարութիւնը ինքն է առաջարկում շարունակել Ֆրանսուզ զօրաց Սորեստանում մնալը, բայց մի և նոյն ժամանակումը պահանջում է, որ նրանք դուրս գնան սահմանեալ ժամանակից 40 օր յետոյ, ցի ապրիլի 16-ին։ Օսմանեան Դուռը իբրև կողմանէ խոստանում է պատասխանատու լինել Սորեստանի կարգի մասին, և թէ դատակնիքները, որ զինուորական ժողովը հատատաց յանցաւորների համար, կը կատարուին մինչև Ֆրանսուզի զօրաց դուրս գնալը։ Իս առաջարկութեանց վրա դատողութիւն կանի Պարիզի կոնֆերենցիան, Վիեն—փաշայն կը սկսի իրա պաշտօնը կոնֆերենցիայի գործերը վերջանալուց յետոյ։

Ռեյտուսից գրում են Մարսել, թէ Դամասկոսի քրիստոնեից նախատինքը և սպառնալիքը օր ըստ օրէ աստականում են։ Դօրանի դրօշները վերէժ են ոսպառնում նրանց, եթէ դատապարտածները կը սպանուին։

Դրամական գործքերը Պօլսումը շատ վատ վիճակումն են։ Օսմանեան Դուռը, թէպէտ նոր պարտք առաւ, բայց չի կարողանում կատարել իրա խոստմունքը հանէ—Եայլէյի (աբքունի գանձարանի տոմսակները) ոսկւոյ վրա փոխելու մասին իրանց գնովը, և հրատարակել է, թէ էդ տոմսակները կը փոխուին նոր տոմսակներով, որոյ անունը կրնի Լավիլեանի մոմիլայէ։ Այս նոր տոմսակները կ'ունենան տարէնը 6%, որ տէրութիւնը կը հատուցանի կէս կէս տարումը ոսկւով, և բայց յայնմանէ տարէն 5% կը հատուցանի դրամագլխից, ենպէս որ բոլոր պարտքը յայս ունի կառավարութիւնը լցանել 14 տարումը։

Պարսից Շահը նոր պատերազմ է բաց անում Թուրքմանների հետ, և սպառում է տանալ Ֆրանսիումը շինել տուած 20,000 հրացաններ, որք հասնելու են Թիֆլիզը վրայով։

Մ. Պ.

Օրագրաց Եւրոպայի յիշատակարանից։

Պրուզիան . . . . . յառաջադիմութիւն ազգային. . . . . Ինչ զարմանալի փոփոխութիւններ ենք տեսնում մեր ազգի մէջ։ Պաղ ոմ էր մնացում ազգի վերայ, հայրենիքի վերայ, ուսումնարանների բարեկարգութեանց վերայ ոմ էր խօսում։ Ոչը էր մի 10 տարի առաջ այս հայութեան եռանդը մեր Թիֆլիզ քաղաքումը. մէկ խօսող էլա կամ, արդեօք ազգային պակասութեանց վերայ, ոչ էին Թիֆլիզում մեր այժմեան վարմունքն երիտասարդները. . . . . Քաղաքիս ոչ քուչէքումը կը լսէիք լուսնիակ գիշերները Հայոց երգեր. ոչ մայրն էր հայերէն խօսում որդոյ հետ. ոչ հայրն էր մնացում որդուն Հայի հոգւով դատարակելու մասին. . . . . Մանչն էլ ճանաչում էին միայն իրանց անձը, ուրիշ էլ ոչ ոքի հետ գործ չունէին։ Խաութիւն. . Խաութիւն. . . . . Քաղաքիս մեծատուներին ամօթ չէր լինիլ, որ ազգային գործքում խառնուէին. լաչէղ էր իրանց ազգ բառը անգամ արտասանելը. ազգը ոչինչ որ նրա համար մտածէին, դլուխ ցաւացնէին։ Հարուստները, վաճառականները մի 10 տարի առաջ ունէի՞ն ժամանակ ազգի վերայ մտածելու. ունէի՞ն աւելորդ փողեր թշուառացեալ ազգին գեղ անելու. կարի՞ էին դուք նրանցից մի 5, 6 մանէթ փող առնել այս ինչ կամ այն ինչ ազգաօգուտ գործքին օգնելու համար։ Ա՛յա կը հանէր իր բերանից մոռոքը ու իր ընկերակցին կը կոէր քաշուել, հասկացնել ազգութիւնը։ Բնչ հատուորը, հաքարը իմանում էր կապի, սիրոյ և միաբանութեան օգուտները։ Օրագիրների դուրս գալուց առաջ մեր եկեղեցականները իմանում էի՞ն իրանց բարձը նշանակութիւնը և ծանր պարտաւորութիւնները։ Փողոցում դուքաններում ոչ Հայոց մարդուն կը տեսնէիր օրագիր կամ գիրք ձեռին կարդալու։ Պէրջապէս տեսել էք դուք Թիֆլիզում մի քանի հատ Հայոց տպարաններ, երկու հայերէն օրագիրներ։ Հայ ուսումնականոց ընկերութիւններ, ոչն, ոչն էիք տեսել մի 10 տարի առաջ։ Բայց հիմայ փառք Աստուծոյ Թեանը մեր Թիֆլիզը իրա Հայ նահապետական — ազգային հոգւով երկրորդն է բոլոր հայաբնակ քաղաքների հաշուի մէջ։

Եթէ այս շարժութիւնը՝ որ էս մի քանի տարի է տեսնում ենք, շարունակուի, եթէ այս տեղ ազգը յառաջադիմութեան մէջ շարունակաբար այդպիսի ահագին քայլեր անէ, ես ձեզ հաւատացնում եմ Կոստանդնուպոլից էլ, որին որ մեր Թիֆլիզից հայութեան մասին բարձր ենք դատում, կը դերազանցէ իր յառաջադիմութեամբը։ Միայն պէտք է խոստովանիմ, որ մեր Թիֆլիզում մէկ պակասութիւն կայ, այդ է պոռխաստանած ընկերութիւնները, ոչ միմեանց դէմ խօսում են, ներգործում են և միմեանց ծաղր են անում. . . . . .

Այս 1861 թուականը բարի ոան ունէր մեր ազգի համար, ազգային յառաջադիմութեան մասին լուրեր շատ ենք լսում։ Ի հարկ է մեր յառաջադիմութիւնը զըլխաւորապէս կախուած է ուսումնարաններից։

Այսօր մի ազգային օրինաւոր ուսումնարան՝ որից դուրս գային լուսաւորեալ և ուսումնական մարդիկ, չունին մեր ռուսիաբնակ Հայերը։ գիտէք ինչքան պակասութիւն է և ինչքան վնաս է սա մեր ազգի համար։

Մեր Թիֆլիզում կայ Ներսիսեան անուանով հռչակաւոր Ուսումնարանը, բայց սա միայն պատրաստում է աշակերտներին հոգևորականութեան, և այս պատճառաւ շատերը հարկադրուած դիմում են դէպի աբքունական Ուսումնարանները։ բայց սահմանափակ բարձր դիտութիւններ, մի և նոյն ժամանակ սառչում են ազգութիւնից և իրանց հայրական ընտանիքին մոռանում են։ այդպէս ահա ոչ մնաց դրանց ուսումնականութեան հետ հայկորանութեան պարտաւորութիւնը։ Ներսիսեան ուսումնարանից ասուահի կան էլի քաղաքիս վից եկեղեցական պարսպներում վից հատ ծխական ուսումնարաններ. և են ոսքա Մօղնու, Սուրբ Հշանի, Բերդի եկեղեցու, Սուրբ Սարգսի, Սուրբ Մինասի և Շամքորեցոց եկեղեցոյ։ Այս ուսումնարանները անշուշտ հարկաւոր են և արժանայ շատակ Ներսէս կաթուղիկոսը հիմնել է այն մտքով, որ այդ թաղերի փոքրիկ երեխայքը հեռուից չը կարենալով գալ ու գնալ Ներսիս-

եան ուսումնարանը, այդ վարժարաններում պատրաստուին, ուստեղ սկզբնական գիտութիւնը և յետոյ այնպէս մըտնեն Ներսիսեան ուսումնարանի 2 կամ 3 բարձր դասարանները։ Ծխական ուսումնարանների նպատակը այդ է, բայց թէ այդ վարժարանները հասնում են իրանց նշանակութեանը.....։

7 կամ 8 տարեկան երեխայն տանը չարութիւն է անում, ծնողքն էլ տանում են տալիս այդ ծխական ուսումնարանների մէկում (որն որ իրանց աւելի մօտիկ է)։ Երեխայն կամաց կամաց այբուբենի միջի 6 կամ 7-ը վանկաւոր բառերը և ընդ նմին սաղ այբուբենի դիրքը աւարտում է։ «Լաս ՃԷ ԳԷրՃ հալա» ասում է մայրը իր մտքումը, որովհետև ոտ ամէն անգամ հաշուում է, թէ որդին գեռ քանի դիրք է աւարտել, սա էլ հատուրով է իմանում հասկանում որպէս գիտութեան ատիճանը։ Վարժապետը քարոզ է համարում այբուբեն աւարտող աշակերտին մի կանոն Սաղմոս տալ ձեռքը։ Երրորդ է այր ասում է աշակերտը, ասում է ու հետը անգիր է անում. մի քանի գլուխ սկզբումը աշխատում է, որովհետև ձեռքի գիրքը նոր է, բայց մի շաբաթից յետոյ աշակերտը մէկ կանոն Սաղմոսի մէջ էլ ոչինչ հետաքրքիր բան չէ տեսնում, որովհետև նոր առանց հասկանալու թուղթակի նման բառեր է սերտել։

Ահա մի կանոն Սաղմոսն էլ վերջացնում է, վարժապետը առնուլ է տալիս ուրիշ կանոն Սաղմոս։ մի և նոյն ժամանակ մի կարճ ծանոթութիւն է տալիս վարժապետը երեխայի հօրը (որովհետև լաւ են փորձել, ադաթ է) թէ նրա որդին այնուհետև այբբեն էլ պէտք է սկսի գրել։ Հայրն էլ որդուց թղթի ու թանաքի հետ ուղարկում է վարժապետի համար 50 կոպէկ ծանոթ։

Աշակերտը տանջուում է և մաշուում մինչև որ էդ գիրքն էլ վերջացնում է և սրա դասատարակիչը հարիւր է համարում տալ նրան Յոհաննէս կամ թէ Պողոս։ Առաջ Պատարագը լոկ կարդում է։ յետոյ տեղ տեղ թարգմանում է ու վերջը վարժապետը դաս է տալիս իրա աշակերտին Զամչեան քերականութիւն, բաա, բաաի և այլն։ Աշակերտը այդ բաները կարդալով և այդ ատաիճանիդ հասնելով կարոտանում է բաւականին լաւ խորդալ, սրա լաւ կարդալն է, որ շուտ շուտ է ասում բառերը միմեանց ետեւից, այլ թէ դրուստ է կարդում, ուղիղ է տրատանում կամ թէ պատպանում է կետադրութեան կանոնները, էդ սուրիշ առարկայ է։ Բայց մեր մտաց աշակերտի մտաւոր մշակուելը արդեօք, նա Զամչեան Քերականութիւն սկսելու համար պատրաստած էր հասկացողութեան մասին։ էդ ոչ մէկը չը կայ։ լեզուի մեքենայն բան է գցած, բայց մտքի մեքենայն ոչ։

Դառաւ երեխայն 14 կամ 15 տարեկան, մայրը կամ հայրը կարծում են, թէ որովհետև որդին արդէն քերականութիւն էր կարդում. վասն որոյ էդ է աշխարհքի բան գիտէ, բաւական է դրան ուսումը։ հիմայ էլ թող գնայ վաճառականութիւն անի։ Որդին էլ վաճառականութիւն սկսելով բաա, բաաին 'ի հարկէ շուտով մոռանում է և յետոյ էլի էն, էլի էն։ Ահա ձեզ ծխական ուսումնարանների նշանակութիւնը, ահա դոցա պտուղը։

Յիշեալ եկեղեցեաց ուսումնարաններում դաս տուող վարժապետները ըստ մեծի մասին հատակաւոր տիրացուներ են։ Այդ վարժապետների գիտութեանց հատիացողութեանց և դոցա դասատուութեանց ձևի վերայ ես լռութեամբ կ'անց կենամ.....։

Այս բաներիս փոխանակ կը բերեմ մէկ նիւթ, որը որ վերաբերում է դոցա և իմ ձեզ նիւթ տալուց յետոյ, մնացածը դուք քննեցէք։

Հաւլաբարու Սուրբ Մինասի Ուսումնարանում պատի վերայ մի երկու ամիս առաջ կը տեսնէիք կպած դասատուութեանց այդ հետևեալ ցուցակը, որը որ առանց փոփոխութեանց բառ առ բառ դուրս եմ գրել։ այս է։

Ցուցակ դասատուութեան առարկայից մանուաոր Ուսումնարանի Սուրբն Մինասայ եկեղեցւոյ։	
Երկրաչափութիւն	Լուսինեան գեոմետրիայ դարձ մանկանց։
Երգեցողութիւն	Աբեսալոմեան հանդիսաւոր թարգմանութեամբ։
Զարդագրութիւն	Յովսեփ Ղեւոնդեանց և Բասապետեանց։
Հինգշաբթի	Վայելչագրութիւն և Մանրանկարչութիւն։
Ուրբաթ	Աբեսալոմեան հանդիսաւոր թարգմանութեամբ։
Շաբաթ	Վայելչագրութիւն և մանրանկարչութիւն։
Կիրակի	Հոգեւոր։

Ո-ոս-ցիչ ասրչա-ոգ Սարգիս Աբեղեանեանց։

Թիֆլիզու Ուսումնարաններից մէկում վարժապետը ուղարկում է մէկ աշակերտի ուսումնարանի տիրոջը մօտ թէ աշակերտների համար ապլաս առ (աշխարհացոյց)—ուսումնարանի տէրը, կառավարիչը պատասխանում է նեղացած թէ «—էս ի՞նչ է, աղբատ խելքնիր, դիմ ասումիք էս առէ՛ք, էն առէ՛ք, աշխիրտ մի՞, ու էդքան բանիր ունենալ մի՞. աշխիրտների համար ապլաս առ, կոսկ, իմ որդիքը որ ապլաս չէն հաքնում, էդ ձեր աշխրանիրդ-ն պակաս օձխի որդիք ի՞ն.....»—

Խեղճը ապլաս աշխարհացոյցի փոխանակ ապլաս անուանով ձեթն է կարծել։

Այս էլ ձեզ ուսումնարանի տէր մարդ։

Այսպէս անդամին յիշատակարան կը նուիրեմ ծխական ուսումնարանների այժմեան դրութեանը։ Բայց հիմայ այնքան երկարաբանութիւնից յետոյ մի քանի լուրեր պատմեմ ձեզ, որը հատատում են մեր ազգային յառաջադիմութիւնը։

—Նախ և առաջ՝ Թիֆլիզու Գիմնազիայի ուսանողքը ինչպէս անցեալ անգամ էլ ասացի։ Հաւլաբարու Սուրբ Մինասի ուսումնարանը վեր առնելով։ Հրաշքով դաս տալու, սկսեցին իրանց գործքը Մարտի 20-ից։ այդ օրը այն ուսումնարանում կային միայն ութը հոգի՝ աշակերտք։ որովհետև ուսանողները մի քանի հայուսէր մարդկանց զնդանութեամբը խոստացեալ են որ աղքատ և յառաջադէմ աշակերտաց գրքերը, թուղթը, գրիչը, բոլոր ուսումնարանական պիտոյքները, մինչև ան-

պամ շրջերն էլ չբնաբար բաժանելու, վասն որոյ այս մի շաբաթում աշակերտների թիւը հասաւ մինչև 31-ին։ Դրսից շատ մարդիկ խնդրացել են օգնելու ուսանողներին թէ փողով, աշակերտների հարկաւոր պիտոյքը գնելու համար, և թէ զբաղերով՝ դոցա գրքատան համար։ Այդպիսի բարի և հայասէր մարդկանց անունները այդ ուսումնարանի ամենական հաշուի հետ միասին կը տպուին Արարատ մէջ, որը որ քաղցը պարտականութիւն է համարել իրա համար ամէն անգամ այդպիսի աղ պատուաւոր գործք սիրողների և այդպիսի հայրենասէր մարդկանց անունները դրոշմել անմոռաց իր թերթերի մէջ տպագրելով։

Ուսանողները մտադիր են ժամանակով նաև Կիպրոս, և վերջը աղէքսանդրիա ուսումնարաններ էլ բաց անեն, եթէ միայն դոցա օգնողներ շատ լինին այդ ամենածանր տպարիզումը։

Երկրորդ՝ քաղաքիս մարդասիրական անունով ընկերութիւնը, որ երկու տարի առաջ աղջատանոց շինեց Թիֆլիզում (Արարատ մէջ այս բանիս բոլոր հանգամանքները հրատարակուած են) այժմ մտադիր է երկրորդ գործքն էլ սկսի, այն է քաղաքիս մի քանի թաղերում ձրիաբար ուսումնարաններ բաց անել աղջկերանց և տղերանց համար։

Երրորդ՝ զինուորական Ս. Բծրունուց քարվանսարայում (Գոլովինսկի պրոսպեկտի վերայ) մի քանի անձինք մտադիր են շուտով կիրակուայ ուսումնարան բաց անելու, ուրեմն Արարատի ձայնը «ձայն բարբառոյ յանապատի» չի լինի։

Պրոգրեսս . . . . . յառաջադիմութիւն ազգային . . . . .

—Փարիզում այժմեան տարածութիւնը է 38,883 քառակուսի վերստ։ Քաղաքից դուրս գալի 49 բուլվարներ ունի։

—Ղատամ քաղաքումը պ. Պարմին մի կերպ թանդանոթ է շինել, որը որ մի բարձրյում 20 անգամ արձակում է։ Սրա գնդակը (գիւլլէն) մինչև 35 վերստ հեռու է գնում։

—Պէնսիլվանիայ դաւառի Տիտուսվիլ քաղաքումը փորել են մի կոր, որից դուրս է գալիս բնական ձէթ օրէնը մինչև 1000 դալոն։

—Սոնա քաղաքումը դոկտոր Դե Ֆոնտենը, էլեկտրոգալ վանիլմով խօլերայ ունեցող հիւանդներին առողջացնում է շատ հեշտ կերպիւ։

Օրագրոց Բարեկամ Ա. Ե.

ԲԱՆԱՒԻՐԱԿԱՆԵՐ.

Գեղեցիկ բան գաղղիացի հեղինակի։

Դու շատ զարմանում եմ մարդկանց վերայ, որը խիստ անհոգ կերպիւ են բնակվում աշխարհումը։ Մտածմունք ասած բառդ աշխարհից հեռանալու մասին օտար է սրանցից, վասն զի աշխարհի հետ այն ընկերութեան դաշնադրութիւնքն են կապում որ դարերի շրջաններումը անգամ անհնար է վերջանալ։ Ամենասովոր բանն ինչ է աշխարհումը, եթէ ոչ մահը, որ մեկի մահուամբը և այլոց յիշեցնում է նորա հետևանքը, բայց ընդհակառակն, ամենասովոր առարկայն մոռացութեան ինչ է, էլի մահը։ Զարմանում, ինչ վատ բան է սորա վերայ մտածելը։ որ մարդիկ հրաժարվում են, չէ՞ որ ղենուորը երբ ուրը պատրաստ է պահում, նշանակում է, թէ նա իւր թշնամեաց վախեցնելը և նրանց յաղթելը միշտ մտածում է, նոյնպէս և մարդ երբ մահը մտածում է, կամենում է աշխարհի չարեաց հեղեղների առաջն առնուլ, վասն զի մտածելով մահը չի յոժարում մեղաց հետ ընկերութիւն անել։ Յիշելով մի իմաստուն մարդոյ խօսքը՝ որ դարերի սկզբումն ձայնել է ընդհանուր մարդկութեան «յիշի՛ր ով մարդ մահը, և յաւիտեան մեղքի մէջ չ'ես ընկնի»։ Բայց այս ձայնը մարդիկ մոռանում են և ընդհակառակն ցանկանում են օրերի վերայ և նորա ամէն մի կիրից պինդ են բռնում։ Ի՞նչ են օրերը, որ մարդիկ նրանց վերայ ցանկանում են, եթէ ոչ արև ու արև, եթէ ոչ մեկ ժամ ու ժամ։ մի նորեկ ժամը նման է անցկացածին, և մեկ ժամու բերածը միայն յաջողակում է, եթէ ոչ աշխատանք, հանգիստ ցաւ, շատ անգամ երբեմն երազ։ Այս ի՞նչ անարգ բան է մարդոյ նրանց հետ միաւորիլը։ ոչ արդեօք մեր հոգին սէր և ներդաշնակութիւն է, ապա ինչի՞ չպիտի նորա հրաժարականն էլ ամէն մի օրուայ հետ տատանվելու երդ լինի, քանի թէ մշանջենաւոր սիս և վէճ։ Ոչ արդեօք այսպիսեաց պէտք է հարցրած թէ ինչի՞ վերայ է.ք յուսադրվում, որ այդչափ քաղցրացնում է.ք ձեզ համար օրերը։ Ինչով կարող է.ք արդարացնել այս խարին մոռացութիւնը, որի մէջ անց է.ք կացնում ձեր օրերը։ Երբեմն՝ սրն որ ձեզ խոստանում է շատ երկար տարիներ, երբեմն՝ ոչ արդեօք Այսիր քաղաքի տրէ մի հատիկ զուակը էր պատանի, մի թէ՞ մահը պատվում է հատակը և առաջանը։ Երբեմն՝ դու թեամբ, բայց նա կարծեմ աւելի երկիւղալի է ձեզ համար, վասն զի անառակ վարքը, չափազանց վայելչութիւնը, ծայրայեղ ցանկութիւնը, զեղխ խնջոյքները, խռովայոյզ պատուսիրութիւնը, անյագ փառասիրութիւնը, վատնդաւոր պատերազմները, վնասաբերութեան չար խորհուրդները նորա վերայ են կիսուած։ Այլ արդեօք մարդ, որ մանկութեան գեղեցիկ օրերումը արած չը լինի այս ամէնը։ Գոնիէն կը ծերանա՞, եթէ նա չը լինէր հեշտասէր, նմանապէս Ա. բիսողոմը, եթէ նա աղտա լինէր պատուսիրութեանէն, Միքեմ թագաւորի սրդին, եթէ նա չը սիրէր Դինային, Սամսոնանը՝ եթէ փառքը նրա համար չէր փարել գերեզման Գեղեցուայ տարի վերայ։ Երբեմն, սակայն պէտք է արդեօք վերանորոգել այս աեղ ազգաց ցաւը և կրկնապատակել արտասուները, որը թափվում են տակաւին, պէտք է արդեօք դառնացնել այն վէրքը, որն որ արիւն է թափեցնում և պէտք է արիւն հոսեցնի երկար ժամանակ մեծ իշխանի սրից, որ ականջ է դնում մեզ։ Մի երիտասարդ իշխանուհոյ, ուրախութեան ոգջոյն արքունեաց, մի ջահել իշխանին՝ յուսոյն մի տերութեան, նոյն իսկ սրդոյն թանկագին պտղոյն նոցա զոմանոց և հատարակաց մաղթանքի, ոչ արդեօք մահը հնձեց սոցա բոլորին 'ի միասին մի վայրկենում։ Այս փառաւոր ապարանը, որն որ լցուեց կարճ ժամանակում այքան փառաք, մեծութեամբք և պատուաք, չը դարձաւ արդեօք բոլորովին տուն սգոյ և արտասութեան, երիտասարդութիւնը՝ ահ, ի՞նչքան երջանիկ կը լինէր Գաղ-

ղնայն, եթէ երիտասարդութեան յոյսը հաստատուն լինէր։ Աւաղ, այս է մի վատնողաւոր եղանակ, և ամենասովոր խոչընդոտն կեանքի յառաջադիմութեան։

Ինչքա՜ն վերայ է ապահովանում դուք ուրեմն, մարմնոյ առողջութեան վերայ, բայց ի՞նչ է ամենաքաւ առողջութիւնը, մի կայծ, որին հանդցնում է մի ամենափոքր շունչ, միայն մէկ տկարութեան օրը բաւական է երկրի ամենառողջ մարմինը կործանել։

Այս էլ աւելի հարցմունք չ'եմ անել որանից յետոյ, եթէ դուք չէ՞ք վերահասու լինել որան. եթէ ձեր առաջուայ տարիքների անարդութեամբ ապականեալ մարմինը չ'է տարածում ձեր մէջ մահուան ղդացմունք. եթէ սովորական տկարութիւնը չ'են բացանում ձեզ համար հեռուից դերեզմանի դուռը, եթէ դառնակսկիծ օրինակները չ'են սպառնում ձեզ մի անակնկալ նեղութիւն։ Այս կամենում եմ որ դուք տարիք երկար ժամանակ առաւել քան ձեր յոյսը, աւաղ, եղբարք իմ, այն բանը, որ պէտք է վերջանայ՝ կարիղ է արդէք երկար երևիլ ձեզ։ Այցելէ՛ք ապա ձեր եաեիյը, ո՞ւր են ձեր առաջուայ տարիքը. ի՞նչ հաստատուն բան թողեցին նրանք ձեր յիշողութեան մէջ, ոչինչ, եթէ ոչ երազ դիշերոյ։ Դուք երազում է՛ք, որ ապրել է՛ք, ահա ձեզ մնացած բոլոր բաները, սոյն միջոցք, որն որ դուք անց է՛ք կացրել ձեր ծննդեան օրից մինչև այժմ. սոքա են մի արագընթաց անցք, որին հաղիւ է՛ք նշմարել անց կենալիս։ Երբ ժամանակ սկսում է՛ք կենալու աշխարհումը, անցեալը երևում է ձեզ կարճ և անստոյգ. բոլոր դարք՝ որք անցել են մինչև մեր ժամանակը դուք կը-համարէ՛ք իբրև վայրկեան մի վազանցուկ, բոլոր ժողովուրդք՝ որք երևացել են և անյայտացել ընդհանուր տիեզերքումը, բոլոր փոփոխութիւնք տերութեանց և թագաւորութեանց, այն ամենայն մեծ անցքերը, որք զարդարում են մեր պատմութիւնը կը լինէին ձեզ համար թատրական զանազան երևոյթք, որն որ տեսել է՛ք վերջանալիս մի օրում։ Դիշեցէ՛ք դուք միայն յաղթութիւնք, մեր թագաւորութեան առաջին տարիքների մեծահռչակ անցքերը, աշխարհների առնելը, փառաւոր դաշնադրութիւնքը, դուք կը շարժուէ՛ք որանցով արդէն, դուք ուզ թէ քսա մեծի մասին հանդիսատիր է՛ք եղել այս բանիս, այլև մասնակից փառքի վաստակներին։ Այսքա՛ն ընկնեն մեր ժամանակագիրների մէջ, մինչև ի-մեր թառները. բայց ձեզ համար, սա միայն երազ և մի փայլատակումն է անհետացեալ, որն որ ամենայն օր ջնջվում է ձեր յիշողութենէն։ Որն է արդեօք այն կարճ Ճանապարհը, որն որ պէտք է մեք գնանք. հաւատանք մեք ուրեմն, որ ապագայ օրերը առաւել ապահով են քան թէ անցեալները։

Տարիքը երևում են մեզ երկար, երբ նոքա հեռի են մեզանից, իսկ ինչ ժամանակ որ հասնում ենք, նոքա անհետանում են, փոխւում են մեզանից մի վայրկեանումը. և մեք դեռ ղլուխներս չը վիր քաշած տեսնում ենք մեզ, որպէս թէ յափշտակուութեամբ օրհասական կէտումը. որն որ երևում է մեզ այնքան հեռի և միշտ անհասանելի։ Այցեցէ՛ք աշխարհքին այնպէս, ինչպէս տեսել է՛ք ձեր առաջին տարիքներումը և ինչպէս տեսնում է՛ք այժմ, մի նոր ընթացք է յաջողել նոքա անդը, որն որ տեսել է՛ք ձեր առաջին տարիքներումը։ Նոր անձինք են բարձրացել թատրանի ամբիանք և մեծ բոլեր են խաղում նոր դերասանք, սոքա են նոր անցք, նոր գործողութիւնք, նոր միտք, նոր քաջագործութիւնք ինչպէս առաքինութեան նոյնպէս և մեղութեան մէջ. որք դարձել են առարկայ գովութեան և ծաղու հասարակաց դատաստանի առաջ։ Մի նոր աշխարհ յանկարծ բարձրանում է առաջինի աւերակների վերայ առանց ձեր նշմարելու։ ամենայն բան անց է կենում ձեր հետ և ձեր նման։ Մի արագութիւն՝ որին ոչինչ բան չի կարող կանգնեցնել, նա ամենայն բան տանում է դէպ 'ի յաւիտենականութեան անդունդքները։ Մեր նախնիքը մեզ համար երկէկ Ճանապարհ բաց որին և մեք բաց ենք անում այսօր մեր յետագայից համար, կենաց ժամանակները վերանորոգվում են, աշխարհի կերպարանքը անց է կենում անդադար։ մեռելք և կենդանիք զտեղի են առնում և յաջորդում են միմեանց շարունակաբար։ ոչ մի բան չէ մնում, բոլորը փոփոխվում է, բոլորը փչանում է և հանդչում է. միայն Աստուած է կենում միշտ և անփոփոխ։ Դարերի հիղիղքը՝ որք տանում են իւրեանց եաեից բոլոր մարդկանց, անց են կենում նորա աչաց առաջից։ նա տեսնում է բարկութեամբ տկար մահկանացուաց, որք տանվում են նրանց արագընթացքից, իսկ նոքա վերաւորում են նրան անցանելիս։ կամենալով դործել այս միայն վայրկենումը իւրեանց բոլոր բարեբաղդութիւնքը և դուրս դնալիս ընկնում են նորա բարկութեան և վրէժխնդրութեան ձեռքը։ Ո՞ր են այժմ մեր մէջ խմաստունք, ասում է Աստուածը. և ո՞ր մարդը կարող է տիրել աշխարհին և արժանանալ այս անուանը, երբ որ մոռանում է այն բանը, ինչ որ է, և ինչ որ պէտք է լինի։

Սակայն իմ եղբարք, ի՞նչ տարաւորութիւն է գործում մեզ վերայ բոլոր անցեալ բանի հաստատութիւնը, մեր մերձաւորաց մահն արդեօք, թէ մեր բարեկամաց, մեր նախանձաւորաց և մեր Տեարց։ մեք չ'ենք մտածում մի փոքր ժամանակ էլ ա, որ նրանց եաեից պէտք է գնանք։ մեք միայն մտածում ենք նրանց կողապատերումը՝ զարդարել մեզ, մեք չ'ենք մտածում նրանց վերայ, որպէս զի նոքա ուրախանան սրտով էլ ա, միայն մտածում ենք այն վայելչութեանց վերայ և կայից, որն որ նոքա ունեցել են. մեք աշխատում ենք շահուել մեկս միւսի մեռացողներումը, մեք նմանում ենք այն խելագար զինուորաց, որք տասսիկ շվոթութեան և իւրեանց ընկերաց տամնայն կողմից անկման մէջ և թրշնամեաց հրձգութեանց և շղթաից մէջ՝ ագահաբար շարկում են իսկոյն նրանց շորերը և դեռ չը հագած մի մահաբեր հարուած դիպչում է նրանց կեանքի հետ միասին և այս դիւրաթափ զարդը՝ որով նոքա պարծենում էին։ Սոյնպէս որդին երազում է իւր հօր ժառանգութեան վերայ, նրա աչքերը խիստ մեծ են թէ չ'է, որդին յաջողում է նրա առատութեան, նրա բազդին, նրա արժանաւորութեանցը։ կատարում է նոքա դամբանական հանդեսը, և յետ է դառնում առաւել զբաղուած և առաւել շարժուած այն նոր կոչումներով, որն որ նա ստացել է քան թէ կատարում է իւր մեռած հօր վերջին պատուերը, քան թէ՞ յաւում-է նոքա կիրքաւան

վերայ կամ թէ չը զղուելով այս աշխարհի քանից, որ մի սատանան ներկայացնում է նրա աչքի առաջ իբրև մի ունայնութիւն, և որ նրան միշտ քարոզում է մի և նոյն վիճակը։ Մեր շքեղասատանների մահը մեզ համար մի օգտակար խրատ չէ, մինը թողնում է մի պաշտօնի ազատ (վականցիայ) անել, և մարդիկ աշխատում են ձեռք գցել։ Միւսը յառաջանում է առաքինաւոր ծառայութեան մէջը։ Մի ուրիշը վերջացնում է նորա հետ այն պահանջողութիւնը, զոր ունէր ձեզ հետ։ Միւսը թողնում է ձեզ տիրոջ շնորհքը և ունկնդրութիւնը, և հենց որանով կարող կը ձեր հոգիքը զալ։ Միւսը մերձենում է ձեզ մի արժանաւորութեամբ և ձեզ համար ճանապարհ է բաց անում բարձրանալու այն տեղը, որում դուք ցանկանում ք հասնել նորա մահից յետոյ, և բացի որանից ամենայն օր ոգևորվում է և բռնում է նորանոր ճանապարհներ, անում է նորանոր ձեռնարկութիւններ և անյոյսացածների օրինակովը չը խրատելով, նա և նրանց փոշոյ վերայ բարձրանում են այնպիսի օրհասական կայծեր, որք վառում են մեր ցանկութիւնները և յուժարութիւնները աշխարհի համար։ Եւ մահը մեր թշուառութեան այս ախտը պատիները աւելի է բորբոքում մարդկանց մէջ ցանկութիւններ քան թէ կենաց բարուքութեան որպիսի և իցէ երևոյթք։ Ուրեմն ի՞նչը կարող է մեզ ազատել այս աշխարհքից, երբ որ մահն ինքն էլ աւելի ամրացնում է մեր շղթայքը և մեզ հաստատում է այն մոլորութեան մէջ զոր ունինք։ Ինչպէս էլ կարող ենք ապաւորել իմաստուն մարդոյ խօսքը, թէ «միտք բեր մահը և յաւիտեան մեղքի մէջ չ'ես ընկնիլ»։ Երբ որ մեկի մահը միւսը իւր բարեբարգութեան կենդրան է յօրինում, երբ որ օրերի մէջի գործադրութեան խորհրդաւոր նպատակը մարդիկ մերժում են, երբ ժամանակը, անցին քանքարը Աստուածմանից մեզ պարգևեալ դարձնում ենք միամանց մէջ վիճաբանութեան, ունայն գործոց համար մշանջենաւոր խռովութեան առարկայի անցք։ Ա՛չ արդեօք այսպիսիքն իւրեանց անձը Աստուծոյ բանին մերձեցնելով են վնասալի իրանց, թէ ճանաչեցին Աստուծոյն, բայց իբրև Աստուած չը պաշտեցին, այլ յիմարացան իւրեանց խորհրդովը և յիմարութեան ետևից գնացին։

Դ. Տէր Յարութիւնեանց։

Բարոյական Դասեր, օգտակար Աստծոյ և հոգեշահ Խրատներ։

Սատանան և ճշմարտանալն իրար հետ բարեկամ չեն լինիլ։

Ինչ ծռնութիւն ասես կարելի է ուղղել, բայց որ մատաղանալ սովորութեան ծռնութիւնը ուղղելու հնարք չը կայ։

Լա՛ որ խօսքով ասում է փողը ոչինչ է, փողն առաջին սիրողն ինքն է։

Ամէն կողմանէ ազատութիւնը պարտաւելի է, բայց շատ ուսումն առնելու համար որած ազատութիւնը ոչ։

Ամէն գործքով լաւութիւն առնել չ'ես ձեռնահաս, որպէս գանգ խօսքով։

Շքեղ հանդերձով շքիլը շատ մարդկանց է խաբում, շրերին մանիկ տարով կարծում են թէ նեքսի մարդն ևս շքեղահանդերձ կը լինի։

Շատ անգամ հնամաշ հանդերձից ներքոյ մեծ հանճար և մեծ հոգի կը լինի թագուցեալ։

Լա՛ որ շատ և շատ շատ ծիծաղում է, կամ ինքն է անխելք, մանաթափ, և կամ քեզ է նայնպիսի համարում։

Փուշ ու տատասկ ցանողը շուշան ու մանուշակ չ'ի քաղիլ։

Աօրուց անխելք ծնուածը՝ դեղերով ու աղօթքներով խելացի չ'ի դառնալ։

Օտար կրօնիք և օտար դատողութիւն ունող անձն կատաղի շուն է, որքան քար ձգես այնքան աւելի կը կատաղի, և որքան հեռանալ լինիս, այնքան ետևուց կը պատահիս նորա կոկմանէ։

Դար լեզուի դէմ լռելը տղամարդութիւն է։

Ընչքով տեսածը ճշմարիտ է քան ականջով լսածը։

Շռայլ մարդոյ փողերը իրա դատածը չեն լինիլ։

Մեզ արտաքին մարդիկ այնքան թշնամութիւն չ'են անում, որքան մեր անհամբերութիւնն և կարճամիտ անհեռատեսութիւնն։

Թանկագին է նա, որ մի քանի բառերով կիսատ սըռատ օտարախօս է լինում, բայց իւր մայրենի լեզուի ոչ խօսիլը գիտէ և ոչ գրելը։

Յիմարաց յիմար է, որ ոչ միայն ինքն իրան է գոլում, և իւր արածներին հաւանում, այլև այլոց ևս է բռնադատում գնայն առնել։

Շան մեռնելու վերայ առաջին ուրախացողն գայլն է։

Ահ գայլոց կենդանութիւն ոչխարաց։

Կալուածք ունեցողն առանց դատարարի չի լինիլ։

Առաքինեաց դատելն հեշտ է քան առաքինի լինիլը։

Թվ որ մի ապրանքի անունը կարի, նորա միտքը կամ թշնամութիւն է, և կամ էժան առնելու այն։

Թուղթ խաղալու թամաշայ անողն ինքն ևս իշտահ ունի խաղալու։ բայց երբք պատճառաւ չ'է խաղում, կամ ջերմը փոշ չունի, կամ վախենում է տանուլ տալուց, և կամ խաղալ չը գիտէ և ցանկանում է տվողիլ։

Ա. Ա.

Սխալներ ուղղելիք։

Լրագրիս 12 համարի 96 երեսի մէջ տպած «Աստուծոյ ճառապարհ» ծառայից» և այլն։ Կարդա՝ արդարութիւն պակասութիւն ունեցող որպէս կոյր, կոպ, խուլ—համր և այլն։ Այնպէս 13 համարի 104 երեսի մէջ՝ ի 12 Մայիսի 1861 ամի, կարդա 1860 ամի։

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:
ТИФЛИСЪ. апрѣля 1-го. 1861 года. Цензоръ И. Кайтмазовъ.
Խմբագիր Արքիմանդրիտ Գաբրիել Պատրիարքեան։
Ի Տպարանի Ղեւոնեան Հոգեւոր Դպրոցի Հայոց ընծայելոյ
Ամենայն Գերագոյն Աթոռոյն։ Ի ԹԻՖԼԻՍ